

ԻՐԱՆԵԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԴԱՆԱԿԱԳՈՒՆԴԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻՆ ԵՒ ՍՈՒՐԻՈՅ ԴԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՄԻՋԵՒ ԴԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Թեհրանի մեջ Իրանեան Յեղափոխութեան պահակազուկի հրամանատար Յուսէյն Սալամի ընդունեց Սուրիոյ պաշտպանութեան նախարար Մահմուտ Ապպասը: Հանդիպումին ընթացքին հրամանատար Սալամի յայտնեց, որ Թեհրան պատրաստակամութիւն կը յայտնէ սուրիական բանակի հրամանատարութեան այլազան օգնութիւններ տրամադրելու: Ապա ասելոց. «*Բողոքային կողմերը, որոնք Սուրիոյ դէմ համաշխարհային պատերազմ մղեցին, այսօր անկուսի սեմին են*»:




Իր կարգին նախարար Ապպաս ըսաւ. «*Իրանի եւ Նասրալլայի զօրակցութեամբ Սուրիոյ ժողովուրդին դիմադրութիւնն ու պայքարը թշնամիներուն յստակ ուղերձ յղեցին*»: Ապա ասելոց. «*Տարածաշրջանին մէջ ԱՄՆ-ի քաղաքականութիւնը ձախողութեան պիտի մատնուի: Մեր թշնամիները օր ըստ օրէ կը նահանջեն: Անոնք ջանացին սուրիական պատկերը Իրանի մէջ կրկնել եւ դարձեալ ձախողեցան, որովհետեւ Թեհրան մնաց կայուն եւ ամրակոշտ*»:

Ապպաս եզրափակելով յայտնեց. «*Ահաբեկչութիւնը հովանաւորող պետութիւնները իրենց յանցանքը այլոց կը վերագրեն եւ անոնց ահաբեկչութեան պիտակով կը փորձեն նսեմացնել*»:

ԱՍՏՆՈՐԴԱՐԱՆԱՆ ՀԱՅՐԸ ԱՅՅԵԼԵՅ ՀԱԼԴԻ ՄՈՒՖԹԻՆ ԵՒ ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱՌԱՍՆԵՐՈՒՄՆՈՐԵՆԻՆ

Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեան, պատուիրակութեամբ այցելեց Հալէպի մուֆթի դոկտ. Մահմուտ Աքքամին: Սրբազան հօր ընկերակցող պատուիրակութեան մաս կը կազմէին Հոգշ. Տ. Մանուկ Վրդ. Պարիխանեան, Ազգ. Վարչութեան անդամներ՝ Երկրչի. Մարալ Գալայճեան-Սեմերճեան, Գուրգէն Գալուստեան եւ Արմէն Գասպարեան:



Հալէպի մուֆթին անդրադարձաւ սուրիահայութեան հաւատարմութեան եւ Սուրիոյ վերականգնումի ծիրէն ներս անոր գործուն մասնակցութեան:

Եղբայրական ջերմ սիրոյ մթնոլորտի մէջ ընթացող հանդիպումին, արծարծուեցան տիրող կենցաղային իրավիճակին առնչուող հարցեր եւ համագործակցաբար անոնցմէ դուրս գալու կարելիութիւնը քննարկուեցաւ:



Անդրադարձ կատարուեցաւ նաեւ Սուրիոյ ժողովուրդին համերաշխ գոյակցութեան եւ իսլամ-քրիստոնեայ սերտ գործակցութեան, որ օրինակ կը հանդիսանայ ողջ աշխարհին:

Սրբազան Հայրը, թեմի ժողովականութեան եւ ժողովուրդին անունով բարեմադրութիւններ փոխանցեց Հալէպի մուֆթիին եւ սուրիական հայրենիքին ու Սուրիոյ ժողովուրդին մաղթեց բարգաւաճ ու ծաղկուն տարիներ:

Նոյն օրը, սրբազան հայրն ու անոր ընկերակցող պատուիրակութիւնը այցելեցին Հալէպի կրօնական կալուածներու տնօրէն դոկտ. Մուհամմետ Ռամի ալ-Ապէյտին:

ԵՐՈՒՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԲԱՆԱԶԵՒ. «ԲԱՆԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՎԵՐՍԿՍԻՆ ՀԵՆՍԻՆՔԵԱՆ ՀՈՉԱԿԱԳԻՐԻՆ ՀԻՄԱՄԲ ԵՒ ԵԱՀԿ-Ի ԽԱՂԱՂԱՊԱՆՆԵՐ ՈՒՂԱՐԿԵԼ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ»

Եւրոպական խորհրդարանը 18 Յունուարին՝ Եւրոպայի միասնական արտաքին եւ անվտանգային քաղաքականութեան իրականացման 2022 թուականի հաշուետուութեան վերաբերեալ բանաձեւէն մէկ օր ետք, 19 Յունուարին որդեգրած է Նոր բանաձեւ մը, որուն մէջ Պաքիստան կոչ կ'ուղղէ բանալու Բերձորի միջանցքը, կը դատապարտէ ռուս խաղաղապահներու անգործութիւնը եւ կ'առաջարկէ զանոնք փոխարինել ԵԱՀԿ-ի խաղաղապահներով:



Բանաձեւին մէջ կը նշուի. «Եւրոպական խորհրդարանը, - հաշուի առնելով Հայաստանի եւ Ատրպէյճանի վերաբերեալ իր նախկին բանաձեւերը, - հաշուի առնելով իր կանոնակարգի 144(5) եւ 132(4) կանոնները, Ա. հաշուի առնելով, որ Լեռնային Ղարաբաղը Հայաստանին եւ արտաքին աշխարհին կապող միակ ճամբան՝ Լաչինի միջանցքը, 12 Դեկտեմբեր 2022-էն վեր փակուած է Ատրպէյճանի ինքնահռչակ բնապահականներու կողմէ, որովհետեւ ատիկա խաթարած է Լեռնային Ղարաբաղի մէջ ապրող 120000 հայերու համար հիմնական ապրանքներու եւ ծառայութիւններու, ներառեալ սնունդի, վաճառանիւթի եւ դեղորայքի հասանելիութիւնը՝ փաստացի շրջափակման մէջ դնելով զանոնք,

Բ. հաշուի առնելով, որ շրջափակումը յանգեցուցած է մարդասիրական ծանր ճգնաժամի, որ զգալիօրէն ազդած է առաւել խոցելի բնակչութեան վրայ՝ նկատի ունենալով, որ ծանր հիւանդներու տեղափոխումը գրե-

Շար.՝ 19 3 ➔

ԱՐՅԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ. «ԱՏՐՊԵՅՃԱՆ ԿԸ ԴԻՄԵ ՏԱՐԱՏԵՍԱԿ ԸՆԿՆԱՐԿՈՒՄՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԵԼՈՎ ԶՈՂԱՐԿԵԼ ԱՐՅԱՆԻ ԺՈՂՎՈՒՐԴԻՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐ ԱՆՄԱՐԿԱՅԻՆ ԲԱՐԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ»

Վերջին շրջանին ատրպէյճանական իշխանութիւնները անելի յաճախակիօրէն կը դիմեն 9 Նոյեմբեր 2020-ի Եռակողմ յայտարարութեան՝ Լաչինի միջանցքի գործունեութեան վերաբերող 6-րդ կէտի կամայական մեկնաբանումին: Սեփական քաղաքական օրակարգը առաջ մղելու նպատակով՝ Ատրպէյճան, փակելով Արցախը Հայաստանին ու արտաքին աշխարհին կապող միակ ճանապարհը, արդէն անելի քան 40 օր պատանդ կը պահէ Արցախի ողջ բնակչութիւնը եւ կը ստեղծէ մարդկային լուրջ ճգնաժամ:



Նման յայտարարութեամբ հանդէս եկած է Արցախի Արտաքին Գործոց Նախարարութիւնը:

«Եռակողմ յայտարարութեան դրոյթները միակողմանիօրէն վերանայելու եւ միջազգայնօրէն ճանչցուած կարգավիճակ ունեցող Լաչինի միջանցքը Ատրպէյճանի կողմէ վերահսկուող եւ բացառապէս մարդասիրական փոխադրումներու համար օգտագործուող ճանապարհի վերածելու Պաքիստանի փորձերը ապօրինի են եւ պետք է մերժուին:

Եռակողմ յայտարարութեան տակ Ատրպէյճանի նախագահի ստորագրութիւնը Ատրպէյճանի ակնյայտ համաձայնութիւնն է ընդունելու Ռուսաստանի Դաշնութեան խաղաղապահ զօրակազմի բացառիկ վերահսկողութիւնը Լաչինի միջանցքին», նշուած է յայտարարութեան մէջ:

Խմբագրական

ԵԳԻՊՏՈՍԻ ՆԱԽԱԳԱՐՅԻ ԱՌԱՋԻՆ ԱՅՅԸ ՀԱՅԱՍՏԱՆ

Եգիպտոսի Արաբական Հանրապետության Նախագահ Ապտուլ Ֆաթթահ աս-Սիսին յառաջիկայ օրերուն Երեւանի պաշտօնական հրաւերով առաջին անգամ ըլլալով Հայաստան կ'այցելէ: Նախագահին այցելութիւնը տարածաշրջանային է: Ան պիտի այցելէ նաեւ Ատրպէյճան: Ինչ որ կը յուշէ, թէ այցելութեան ընթացքին կրնան ըլլալ նաեւ քաղաքական նշանակութեամբ յայտարարութիւններ:

Հայաստան-Եգիպտոս դիւանագիտական երկկողմ յարաբերութիւնները 31 տարուան կեանք ունին: Հայաստանի Հանրապետութեան եւ Եգիպտոսի Արաբական Հանրապետութեան միջեւ դիւանագիտական յարաբերութիւնները հաստատուած են 31 տարի առաջ, 9 Մարտ 1992-ին:

Հայաստան Գահիրէի մէջ դեսպանութիւն բացած է Սեպտեմբեր 1992-ին, իսկ Ապրիլ 1993-էն ի վեր Երեւանի մէջ կը գործէ Եգիպտոսի Արաբական Հանրապետութեան դեսպանութիւնը:

Երկու ժողովուրդներուն միջեւ առկայ է պատմական բարեկամութիւն եւ փոխադարձ վստահութիւն: Թէեւ Եգիպտոս-Հայաստան ապրանքաշրջանառութիւնը որոշ մակարդակ նուաճած է, սակայն տնտեսական յարաբերութիւնները, յատկապէս զբօսաշրջութիւնն ու առեւտուրը զարգանալու բազում կարելիութիւններ ունին, նկատի ունենալով Եգիպտոսի մեծ շուկան, իսկ Հայաստանի՝ աշխարհաքաղաքական դիրքը:

Անկախ տնտեսական յարաբերութիւններէն, Եգիպտոս քաղաքական առումով միշտ ալ դրական դերակատարութիւն ունեցած է հայ ժողովուրդի իրաւունքներու, մանաւանդ Հայոց Ցեղասպանութեան հարցի արծարծման մէջ, նկատի ունենալով նաեւ իր ունեցած այդ օրերու հսկայ արխիւն ու քաղաքական անկայուն յարաբերութիւնները Թուրքիոյ հետ: Արցախի նախկին արտաքին գործոց նախարարը այցելած է Եգիպտոս եւ խորհրդակցած Արցախի հետ տնտեսական գործակցութեան որոշ ոլորտներու ստեղծման շուրջ: Արցախի տագնապին գծով Եգիպտոսի դիրքորոշումը միշտ ալ եղած է հարցի խաղաղ կարգաւորման եւ միջազգային օրէնքի պահպանման շրջագիծին մէջ:

Եգիպտոսի հայ համայնքը նշանակալից դերակատարութիւն ունեցած է Սփիւռքի կազմաւորման սկզբնական տարիներուն յատկապէս, իսկ վերջին տարիներուն Հայ Դատի Եգիպտոսի յանձնախումբը Եգիպտոսի մտաւորականներու եւ քաղաքական գործիչներու հետ աշխոյժ աշխատանք ծաւալած է:

Հարաւային Կովկասի ներկայ լարուած վիճակի լոյսին տակ, Եգիպտոս - Հայաստան յարաբերութիւններու վերաշխուժացումը տնտեսականին կողքին կրնայ քաղաքական անդրադարձ ունենալ նաեւ, եթէ նկատի ունենանք արաբական աշխարհին մէջ կշիռը վայելող եւ թրքական քաղաքականութեան հետ հակադրուող Եգիպտոսի ներկայ քաղաքական յարաբերութիւնները Իրանի, Միջին Արեւելքի տարբեր երկիրներու, արաբական աշխարհի ու Չինաստանի հետ:

«Գ.»

-Իտլիայի հարաւային արուարձանին մէջ սուրիական բանակը ծախողութեան մատնեց «Ճապիաթ ալ Նուսրա»-ի երթակայ «Ինդիմասիին» կոչուած զինեալ ահաբեկչական խմբաւորման մղած զինուորական գործողութիւնը: Իտլիայի մէջ «Ուաթան Անլայն»-ի թղթակիցը հաղորդեց, որ երկարատեւ բախումներէ ետք, սուրիական բանակը դէմ դրաւ յարձակումին, իսկ ահաբեկիչներուն շարքին մէջ կիւբական բազմաթիւ վնասներ, ինչպէս նաեւ 12 մեռել եւ վիրաւորներ արձանագրուեցան:



-Պանիասի քարիւղի գտարանէն աղբիւր մը հաղորդեց, որ երկու միլիոն հում քարիւղի տակար կրող երկու քարիւղատար հասաւ Պանիասի Նաւահանգիստ, ուր անմիջապէս տեղադրուեցաւ գտարանի ամբարներուն մէջ: Աղբիւրը ակեցուց, որ քարիւղային արտադրութիւններու ներածման գործողութիւնը կայուն է, հետեւաբար նահանգներու քարիւղային արտադրութիւններու յատկացուած քանակը պիտի աճի:



-Համաշխարհային սակարանէն ներս ունկիի գինի բարձրացման գուճահեռ, սուրիական շուկային մէջ ոսկիին գինը աննախընթաց բարձրացում արձանագրեց: Սուրիոյ Ոսկերիչներու Միութեան հրապարակած ցուցակին համաձայն, ոսկիի 1 կրամին գինը (21 կարատ) հասաւ 352.000 ա.ո.ի, մինչդէռ 18 կարատի մէկ կրամը՝ 301.714 ա.ո.:



-Իրանի նախագահ Իպրահիմ Ռաիսի ընդունեց Սուրիոյ պաշտպանութեան նախարար Ալի Մահմուտ Ապպասը, Թեհրան տուած պաշտօնական այցելութեան ընթացքին:

Նախագահ Ռաիսի Իրանի զօրակցութիւնը յայտնեց Սուրիոյ ժողովուրդին, յատկապէս վերականգնումի աշխատանքներուն գծով՝ երկու երկիրներուն միջեւ տնտեսական յարաբերութեան ամրապնդման միջոցաւ: Ան շեշտեց, որ Սուրիոյ եւ Իրանի միջեւ կը պահպանուի կայուն յարաբերութիւն, որ ռազմավարական կը համարուի:



Իր կարգին նախարար Ապպաս յայտնեց, որ Սուրիա իր բարեկամ երկիրներուն եւ դաշնակիցներուն զօրակցութեամբ յաղթահարեց ահաբեկչական պատերազմը, ակեցնելով, որ սուրիական-իրանեան յարաբերութիւնը օր ըստ օր կը զարգանայ եւ առաւել նպատակասլաց կը դառնայ:

ՍԱՆԱ-ի Հալէպի թղթակիցը յայտնեց, որ Շէյխ Մաքսուտ շրջանին մէջ փուլ եկած շէնքին զոհերուն թիւը հասաւ 16-ի, իսկ վիրաւորներունը՝ 4-ի: Փլատակներուն տակ մնացածներուն փրկելու աշխատանքները կը շարունակուին բժշկական եւ քաղաքացիական պաշտպանութեան խումբերուն կողմէ: Շէնքը կը բաղկանար 5 յարկերէ, իսկ անոր փուլ գալուն պատճառով շէնքի սիւներուն ջուրի մէջ ողողուած ըլլալն է:




Սուրիոյ ներքին գործոց նախարարութիւնը նախապէս տեղեկացուցած էր, որ Կիրակի, 22 Յունուարին Հալէպի Շէյխ Մաքսուտ շրջանին մէջ փուլ եկած էր հինգ յարկան շէնք մը, որուն մէջ եօթ ընտանիք կը բնակէր:

Լուրեր Հայաշխարհին

ԵՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ ԴԻՏՈՐԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ ԿՈՒՐԱՐԿԵ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԵՐԶԱՆՆԵՐ

Երոպական Միության խորհուրդը Երկուշաբթի, 23 Յունուարին համաձայնություն գոյացրեց Ե Հայաստանի սահմանամերձ շրջաններում մեջքադաքացիական առաքելության (ԻԵՈՒՄԱ) ստեղծման:



«Առաքելության նպատակն է նպաստել կայունության, այդ շրջաններում մեջքամրայնորեն վստահությունը եւ պայմաններ ապահովել Հայաստանի ու Ատրպեյճանի միջև յարաբերություններու կարգաւորման համար», նշուած է Երոպական Միութեան Խորհուրդի հաղորդագրութեան մէջ:

«Հայաստանի մէջ առաքելութեան ստեղծումը Հարաւային Կովկասի մէջ Երոպական Միութեան ներգրաւման նոր փուլի մեկնարկը կ'ազդարարէ: Երոպական Միութիւնը պիտի շարունակէ աջակցիլ լարուածութեան թուլացման ջանքերուն՝ յանձնառու ըլլալով աշխատիլ երկու կողմերուն հետ՝ որպէսզի շրջանին մէջ յարատեւ խաղաղութիւն հաստատուի», յայտարարած է Երոպական Միութեան արտաքին յարաբերութիւններու եւ անվտանգութեան հարցերով բարձրագոյն ներկայացուցիչ Ժոզեփ Գորեթի:

«Արձագանգելով Հայաստանի պահանջին՝ քաղաքացիական առաքելութիւնը կանոնաւոր հիմունքներու վրայ հսկողութիւն պիտի իրականացնէ՝ տեղեկութիւններ հաղորդելով իրավիճակի մասին, ինչ որ պիտի մեծցնէ Երոպական Միութեան իրազեկման մակարդակը: Առաքելութիւնը նաեւ պիտի աջակցի Երոպական Միութեան Խորհուրդի Նախագահ Շարլ Միշելի հովանակին ներքեւ ընթացող բանակցային գործընթացին», նշուած է Երոպական Միութեան հաղորդագրութեան մէջ:

Երոպական Միութեան խորհուրդը նաեւ կը տեղեկացնէ, որ առաքելութեան երկու տարուան լիազօրութիւն տրուած է, անոր կեդրոնատեղին պիտի գտնուի Հայաստանի մէջ:

«Քաղաքացիական գործողութիւններու հրամանատար նշանակուած է Երոպական Միութեան արտաքին յարաբերութիւններու ծառայութեան քաղաքացիական ծրագրաւորման բաժանմունքի ղեկավար Սթեֆանօ Թոմաթթ», կը տեղեկացնէ Երոպական Միութիւնը՝ աւելցնելով, որ Հայաստանի մէջ դիտորդներու գործողութիւններու համակարգող պաշտօնէայի անունը յայտնի պիտի դառնայ մօտ ապագային:

Հայաստանի արտաքին գործոց նախարար ղեկավար Արարատ Միրզոյեան ողջունած է Երոպական Միութեան այս որոշումը, պատրաստակամութիւն յայտնած է համագործակցելու առաքելութեան հետ եւ աջակցելու անոր գործունեութեան:

ՀՅԳ ՀԱՅ ԴԱՏԻ ԵՐՈՊԱՅԻ ՔՐԱՏԵՆԵԱԿԸ ԵՐՈՄԻՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇՆԱՆՈՒԹԵՆԵՆ ԿՎԿԵԿԱԼԵ ՈՐՈՇԱԿԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

19 Յունուարին Երոպական Խորհրդարանը իր լիազուժար կիստին ընդունած է «Լեռնային Ղարաբաղի Մէջ Երազափակման Մարդկային Յետեւանքները» վերտառութեամբ բանաձեւ, որով խորհրդարանը արձանագրած է շրջափակման հետեւանքով Արցախի մէջ ստեղծուած մարդկային հետեւանքները: Երոպական Խորհրդարանը Ատրպեյճանին յորդորած է յարգել ու իրականացնել 9 Նոյեմբեր 2020-ի եռակողմ յայտարարութեամբ ստանձնած պարտաւորութիւնները եւ անյապաղօրէն վերաբանալու Լաչինի միջանցքը: Անդրադառնալով Երոպական Խորհրդարանի կողմէն յիշեալ բանաձեւի ընդունումին՝ ՀՅԳ Հայ Դատի Երոպայի գրասենեակի նախագահ Գասպար Կարապետեան յոյս յայտնած է, որ այս գործընթացը պիտի յանգեցնէ Երոպական Միութեան գործադիր մարմիններու վրայ ճնշումին, որպէսզի իրենց հերթին ճնշեն Ատրպեյճանին՝ վերջ տալու իր վարած ցեղային գտման քաղաքականութեան եւ վերադառնալու խաղաղ բանակցութիւններու՝ ԵԱՀԿ Յէլսինքեան եզրափակիչ շարժումի հիմնարար սկզբունքներու հիման վրայ:



ՀՅԳ Բիւրոյի Հայ Դատի կեդրոնական գրասենեակ
19.01.2023

ՀԱՅԱՍՏԱՆ ՄԱԿ-Ի ԴԱՏԱՐԱՆԵՆ ՆԵՐՍ ԱՏՐՊԵՅԱՆԸ ՄԵՂԱԴՐԱԾ Է ՃԵՂԱՅԻՆ ԽՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ

Հայաստան Ատրպեյճանին դէմ ՄԱԿ-ի Արդարադատութեան միջազգային դատարան ներկայացուցած է ցեղային խտրականութեան բոլոր ձեւերու վերացման միջազգային համաձայնութեան մեկնաբանութեան եւ կիրառումին խախտման մասին յուշագիր: Միջազգային իրաւական հարցերու Հայաստանի ներկայացուցիչ Եղիշէ Կիրակոսեան Թուիթթրի իր էջին գրած է, որ փաստաթուղթը մանրամասնօրէն կը ներկայացնէ Ատրպեյճանի կողմէն այդ համաձայնութեան կոպիտ խախտումները տասնամեակներ շարունակ: Այլ մանրամասնութիւններ պաշտօնեան չէ արձանագրած:



ԵՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԱՐԱՆԻ... Սկիզբ՝ էջ 1

թէ անկարելի է, ստեղծուած կացութեան պատճառով մէկ մահ արձանագրուած է, հարիւրաւոր ընտանիքներ կը մնան կիսուած,

Գ. հաշուի առնելով, որ այս մարդասիրական ճգնաժամը առաւել եւս խորացած է Ատրպեյճանի կողմէ Լեռնային Ղարաբաղ բնական կազի մատակարարման խափանման պատճառով, որուն պատճառով տուները, հիւանդանոցներն ու դպրոցները մնացած են առանց ջեռուցման,

Դ. հաշուի առնելով, որ պահպանելով Լաչինի միջանցքի շրջափակումը, Ատրպեյճան կը խախտէ 9 Նոյեմբեր 2020-ի զինադադարի մասին եռակողմ յայտարարութեամբ ստանձնած պարտաւորութիւնները, որով Ատրպեյճանը պետք է երաշխաւորէ միջանցքի երկու ուղղութիւններով շարժող մարդոց, փոխադրամիջոցներու եւ բեռներու անվտանգութիւնը,

Ե. հաշուի առնելով, որ Լաչինի միջանցքի օգտագործման խոչընդոտները ետ կը մղեն Հայաստանի եւ Ատրպեյճանի միջեւ խաղաղութեան հուլովոյթը եւ կը խաթարեն միջազգային վստահութիւնը:

1. Կը ցափ Լաչինի միջանցքի շրջափակման եւ Լեռնային Ղարաբաղի տագնապի ողբերգական մարդասիրական հետեւանքներուն համար:

2. Ատրպեյճանը կը յորդորէ յարգելու եւ իրականացնելու 9 Նոյեմբեր 2020-ի եռակողմ յայտարարութիւնը եւ անյապաղ վերաբանալու Լաչինի միջանցքը՝ կարելիութիւն ընձեռնելով ազատ տեղաշարժելու եւ ապահովելու հիմնական ապրանքներու եւ ծառայութիւններու հասանելիութիւնը՝ այդպիսով երաշխաւորելով անվտանգութիւնը շրջանին մէջ եւ ապահովելով բնակիչներու ապրուստը:

3. Կ'ընդգծուի համապարփակ խաղաղութեան համաձայնագրի անհրաժեշտութիւնը, որ պետք է երաշխաւորէ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչութեան իրաւունքներն ու անվտանգութիւնը, Ատրպեյճանին կոչ կ'ուղղէ՝ պաշտպանելու Լեռնային Ղարաբաղի մէջ ապրող հայերու իրաւունքները եւ գերծ մնալու իր հրահրիչ հռետորաբանութենէն, որ կոչ կ'ուղղէ խտրականութեան ենթարկել հայերը եւ հայերուն կոչ կ'ուղղէ լքելու Լեռնային Ղարաբաղը:

4. Ատրպեյճանին կոչ կ'ուղղէ՝ ձեռնպահ մնալու Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի միջեւ փոխադրամիջոցային, ուժանիւթային եւ հաղորդակցութեան կապերու գործունեութիւնը խաթարելէ:

5. Խստօրէն կը դատապարտէ Ատրպեյճանի կողմէ մարդու իրաւունքներու պաշտպանները եւ քաղաքային հասարակութեան կազմակերպութիւնները քաւութեան նոխազ դարձնելը եւ Երոպական Միութեան ու անդամ պետութիւններու ներկայացուցչութիւններուն կոչ կ'ուղղէ աջակցելու անոնց աշխատանքին:

6. Կը դատապարտէ ռուս «խաղաղապահներու» անգործութիւնը, կը գտնէ, որ անոնց ՄԱԿ-ի լիազօրութեան տակ ԵԱՀԿ-ի միջազգային խաղաղապահներով փոխարինումը պետք է դառնայ իրատապ բանակցութիւններու կիւթ:

7. Միջազգային կազմակերպութիւններուն կոչ կ'ուղղէ տրամադրելու անարգել մուտք դէպի Լեռնային Ղարաբաղ՝ կացութիւնը գնահատելու եւ անհրաժեշտ մարդասիրական օգնութիւն տրամադրելու համար:

8. Կոչ կ'ուղղէ՝ ՄԱԿ-ի կամ ԵԱՀԿ-ի փաստահաւաք առաքելութիւն ուղարկելու Լաչինի միջանցք՝ տեղւոյն վրայ մարդասիրական կացութիւնը գնահատելու համար:

9. Կոչ կ'ուղղէ՝ անյապաղ վերսկսելու բանակցութիւնները՝ առանց նախապայմաններու՝ հիմնուած Հելսինքեան եզրափակիչ հռչակագրի սկզբունքներուն վրայ:

10. Երոպական Միութեան կոչ կ'ուղղէ՝ եռանդուն կերպով ներգրաւուելու եւ ապահովելու, որ Լեռնային Ղարաբաղի բնակիչները այլեւս պատանդ չըլլան Պաքիստանի աքթիւիզ միւս, Ռուսիոյ ապակառուցողական դերին եւ Միւսքի խմբակի անգործութեան:

11. Ան իր նախագահին կը յանձնարարէ տոյն բանաձեւը փոխանցել Հայաստանին, Ատրպեյճանին եւ միջազգային կառոյցներուն»:

ՓՈՒՆՉ ՄԸ ԼՈՒՍԱԽՈՐՈՂ ԺՊԻՏ ՄԱՍԻՍ ԱՐԱՐԱՏԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ



Ս. Մասիսը

Կորսնցուցիկ Մասիս Արարատեանը...

Երեւան եկած է աշակերտութեան օրերուն...



բայց միշտ երիտասարդ արուեստագետին կեանքի մոմը մարտեցաւ...

որոնք այլապէս անմահացան իր գծանկարներուն շնորհիւ...

Մասիսին մահուան գոյժը անակնկալ էր...

Երգիծանկարիչ Մասիսը գլխաւոր արուեստագետ էր...

Վաւերական արուեստագետները անոնք են...

րօրէն կազմեց սփիւռքեան երգիծանկարչութեան երրորդութիւնը...

Մասիս Արարատեանը նաեւ երգիծաբան փիլիսոփայ մարդ էր...

Անոնք, որ վայելած են Մասիսին մտերմութիւնը...

Տարիներ առաջ, ունեցած էր առողջական անակնկալ տատանում մը...

Գրաւորները: Կարելի է բազմաթիւ «դասակարգումներու» տակ տեղաւորել...

Յալէպէն միւսէն Պէյրութ եւ Միացեալ Նահանգներ՝ Մասիսը հռչակ ունեցաւ...

բնագաւառներ եւս: Եթէ անոր հատորները ըստ բաւականին մէկտեղած են...

Եւ որքան խայտաբղետ է Մասիսի յօրինած երգիծանկարներուն



Կարելի է հազար ու մէկ էջ արծանագրել Մասիս Արարատեան արուեստագետին մասին...

Կարելի է հազար ու մէկ էջ արծանագրել Մասիս Արարատեան արուեստագետին մասին...

Թուրքիոյ նուրջ

ԹՈՒՐԷԻԱ ԲԱՅԱՅԱՅՏՈՒՄԸ ՄԻԱՅԱՏ Է ԱՏՐՊԷՅՃԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՂԵՂ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՆԿՐՏՈՒՄՆԵՐՈՒ ԲԱՐՈՉՊՈՒԹԵԱՆ

Տարածաշրջանային խաղաղութան մասին խօսակցութիւններու շրջագծին մէջ Ատրպէյճան եւ Թուրքիա քարոզչութիւն կը ծաւալեն Հայաստանի հանդէպ տարածքային նկրտումներու առումով: Ատրպէյճանի մէջ Թուրքիոյ ներկայ դեսպան Ճահիտ Պաղչին միացած է այսպէս կոչուած «Արեւմտեան Ատրպէյճան» նախաձեռնութեան:



Յիշեցնենք, որ այս նախաձեռնութիւնը Հայաստանի ներկայ ամբողջ տարածքին հանդէպ յաւակնութիւններ կը ներկայացնէ: «Ամբողջ պատմութեան ընթացքին Ատրպէյճան եւ Թուրքիա միասին պայքարած են արտաքին թշնամիներու դէմ», ըսած է դեսպանը «արեւմտեան Ատրպէյճանի համայնքին հետ» տեղի ունեցած հանդիպման ընթացքին:

Դեսպանը նշած է, որ «Թուրքիա միշտ օգնած է Ատրպէյճանին դժուար ժամանակներու մէջ, Ատրպէյճան եւ օգնութիւն ցուցաբերած է Թուրքիոյ: Հայրենական 44-օրեայ պատերազմի ընթացքին Թուրքիա իր եղբոր քաղաքական եւ բարոյական աջակցութիւն ցուցաբերած է: Այս տարածաշրջանին մէջ խաղաղութան ապահովման համար կը կարծենք, որ Ատրպէյճան, Թուրքիա եւ Հայաստան պէտք է միմեանց հետ քննարկեն առկայ հարցերը: Միայն այսպէս կարելի է հասնիլ խաղաղութեան»:

Ճահիտ Պաղչին յայտնած է նաեւ, որ «Թուրքիա պատրաստ է աջակցութիւն ցուցաբերելու արեւմտեան Ատրպէյճանէն բռնահանուած ատրպէյճանցիներու առնչուող փաստերու հետաքննութեան հարցով»:

ՓՈՒՆՋ ՄԸ...

Սկիզբ՝ էջ 5

թէ ան իր «մասնակցութիւնը բերած է» Այնթապի ինքնապաշտպանութեան մարտերուն, 1920-ին, Կիլիկիոյ վերջնական պարսկամբ կանխող, վերապարած հայութեան բեկորներուն երկրորդ փրկութեան սխրանքին: Իսկ այդ «մասնակցութիւնը բերած է» նաեւ աւելին էր եղած, որովհետեւ հայրը եղած էր պաշտպանական ուժերու գիտնորական պատասխանատուներէն՝ վարիչներէն մէկը:

Քիչ առաջ ակնարկութիւն ըրինք, որ Մասիսին երգիծանքը նուրբ է ու ազնիւ: Ան արժանաւոր հետեւորդ է եղած Յակոբ Պարոնեանի այն սկզբունքին, որ նախընտրելի է ինդալով-ինդացներով դաստիարակել, քան թէ գանակով, ծեծով ու բրտութեամբ: Եթէ արագօրէն թերթատէք անոր հաւաքածոն, պիտի նկատէք, որ կարմիր թելի պէս բան մը կ'անցնի բոլորին մէջէն: Երգիծանքը կը մնայ կամօքներու, սահմաններուն մէջ, երբեմն կան խայթոցներ, սակայն երբեք չի վիրաւորեր իր «որսը», անոր համար այլ, մարդիկ ուրախ եւ հպարտ եղած են, որ արժանացած են... Մասիսին թիրախ դառնալու պատիւին: Այս սկզբունքը, սակայն, ի գօրու չէ այն գոր-


ծերուն մէջ, ուր խնդրոյ առարկայ է ոճրածին Թուրքը: Մասիսը ակնխալ էր ու մնաց Թուրքին հանդէպ: Իր ստեղծած ԹՈՒՐԷԻ ՏԻՊԱՐԸ միշտ ալ ատելութիւն արթնցնող եղած է, մէկ ձեռքին՝ արիւնոտ եաթաղանը, դեմքին՝ կիսավայրենի, նախամարդ յիշեցնող գիծեր, յարատեւ արծազանգ մը՝ Յովհաննէս Թումանեանի այն բնորոշումին, որ թուրքին համար հազար տարի բաւարար չեղաւ հեռանալու անբան ու վայրագ անասունի վիճակէն, ու դեռ երկար ճամբայ ունի հասնելու Մարդուն:

Վիթխարի վաստակով, ազնիւ հոգիով եւ իր սրտին ու բազկերակին զարկերը հայութեան եւ մարդկութեան լաւին ու տագնապներուն հաղորդ պահող տիտան մը կորսնցուցինք: Պետրոս Դուրեան բոլորովին այլ տրամադրութեամբ եւ հոգեվիճակով արձանագրած է «աստղ մըն ալ ես կ'երթամ յաւելուլ յերկնից» բառերը: Կրնանք նոյն բառերը այլ հոգեվիճակով արձանագրել հիմա՝ երբ հրաժեշտ կու տանք Մասիսին, որովհետեւ վստահեմք, որ անոր կեանքը լուսաւորած աստղը չի կրնար մարիլ, այլ մեր բոլոր անմահներուն պէս նոր լոյս պիտի անեցնէ հայութեան երկնակամարին վրայ: Եւ թող այս տողերն ալ փունջ մը ժպիտ ըլլան իր անմար յիշատակին:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ ԱՆԴԻ ԱՇԽԱՐՀԵՆ - ԹԻՒ 1

Մասիս Արարատեան

- Հիմա մեռած ես, ցաւ չունիս, վախ չունիս: Խօսե՛ ուզածդ: Ես կը գրեմ:
- Երեք եղբայրներ էինք, մեծը գնաց Արժանթին, միջնեկը՝ Քանադա, ես մնացի Հայէս, չամուսնացայ, հոգ տարի ինչու եւ մօրս միջնեկ իրենց վերջին շունչը: Թաղեցի գիրքը: Իմանալու համար ծնողքիս դառնութիւն-



ները եղբայրներուս հասցէին, յուսամ օր մըն ալ եղբայրներուս հետ տեսակցութիւն կ'ունենաւ: Հայրս ու մայրս միշտ կ'օրհնէին զիս եւ կը պաշտէին, ես տարբեր էի եղբոր միւսներէն: Մահացայ ջքաւոր: Դագաղիս յուղարկւորները 11 հոգի էին, երեք դրացիներ, երեք պլոթի խաղընկերներ, մօրաքոյրս, իր թոռնիկը՝ նշանածին հետ, դպիր մը եւ քահանայ մը: Ոչ մէկ խօսք, ոչ մէկ արցունք, ոչ ալ սեւ փողկապ: Կարճ աղօթք մը եւ վերջ: Անջատեցին զիս աշխարհէն: Մտցուցին



մութ եւ պաղ հողին տակ: Ուրախացայ, թաղումիս 11 հոգի հետեւեցան դագաղիս, ուրիշներ այդ ալ չեն ունեցած: Յաջորդ օրը դրացիներս պատրաստ էին հանգուցեալիս հոգւոյն հոգեճաշ տալ, բայց երբ տեսած են սենեակիս մէջ հարազատներու բացակայութիւն, ստիպուեցին տանս «թանկագին» իրերը եւ առարկաները բաժնել երեքի եւ այն ալ՝ հաւասար: Դրացիներս ողջութեանս կը կարծեն եղեր, որ ես անգտանելի առարկաներ, իրեր եւ մանաւանդ պահուած ոսկի դրամներ կրնամ ունեցած ըլլալ եւ որպէսզի անվստահութեան առաջըք առնեն, երեք դրացիներս ալ համաձայնաբար եւ յուզումով ներկայ գտնուած են յուղարկւորութեանս: Կահ-կարասիներուս բաժանումն ալ եղած է անխարդախ եւ ուրախութեամբ: Ահա քեզի դրացի: Թաղումն երկու օր ետք, խեղճ մօրաքոյրս բնակարանէս ներս մտնելով, կ'ապշի ամայութեան վրայ: Ան իր քրոջը կողմէ յիշատակ կ'ուզէր ժառանգել մահճակալս, որ քրոջը կը պատկանէր ինձմէ առաջ. պիտի նուիրէր զայն թոռնիկին՝ ամուսնութեան առթիւ: Այս ալ հարազատ: Մեռնելէս ետք ամէն բան սկսայ յստակ տեսնել: Մեծ եղբայրս մահացաւ Արժանթին, միջնեկը՝ Քանադա, ես՝ հոս: Եղբորս թոռնուհին, որ Չուիցերիա կը բնակի, լսելով մահս, կը հեռաձայնէ Քանադա՝ իր մեծ մօրը. «Նանի, լսեցի մեծ պապային պզտիկ եղբայրն ալ մահացած է Հայէս, խերն անիծեմ այս աշխարհին, հայ դրացի մը իսկ չունիմ, որ միասին, ծայնակցելով կուշտ ու կուռ լանք»: Եղբորս կինն ու թոռնիկը կէս ժամ հեռաձայնով միաբերան լացին: Ուրեմն երեւակայէ, պրն. թղթակից, թէ՛ կեանքի եւ թէ՛ մահուան ընթացքին, միախառնելիք կէտեր ալ կան: Վերջապէս հողը թէթէ պիտի գգամ վրաս: Չիս յիշող հարազատ լացողներ պիտի ունենամ այնքան ատեն, որ ողջ են Քանադայի եղբորս կինը եւ Չուիցերիոյ եղբորս թոռնուհին: Անհոգ մնամ ու հող դառնամ:

Պրիսմակետ

ԻՐԵՐԸ ԵՒ ՄԵՆՔ



Մարուշ Երամյան

Սուրիոյ պատերազմէն շահ տառաջ արդէն վարժ եղած ենք, որպէս հայեր, գաղթելու. Սուրիոյ պատերազմին ստեղծած կացութիւնը, սակայն, շատ անելի բարդ էր, անելի նման Գաղթականութեան օրերուն, երբ գրեթէ ոչինչ կարելի էր առնել տան իրերէն, նոյնիսկ ամենէն փոքր իրերէն:

Վերջերս շատեր երբ ելան իրենց տան դռնէն, կեցան սեմին, աչք մը նետեցին տան վրայ, նախագգալով կարծես որ կրնան ա՛լ չտեսնել այն բոլորը, որ հաւաքքեր էին շիւղ ամ շիւղ եւ տուն կազմեր:

Անոնք, որոնք ամիս ունեցան քիչ մը անելի երկար մտածելու իրենց ճամբորդութեան մասին, անճրկած մնացին տանելիքին եւ ձգելիքին միջեւ. տան մը ամենէն ապուշ իրերն անգամ իմաստ ունին տանտիրոջ համար, որովհետեւ իրենց մէջ կը կրեն յիշատակներ, ստացուած կամ գտնուած պահուստի ապրումները, որոնք երբեք չեն մոռցուիր եւ այդ իրերուն կու տան արժէք մը, որ շահ տա անելին է, քան իրենց իսկական արժէքը:

Յետոյ գաղթեցինք, մօտիկ թէ հեռու երկիրներ հասանք, քաղաքներ ընտրեցինք եւ սկիզբէն սկսանք տուն-տեղ կազմել: Բայց մեր դասը սորվէր էինք. ա՛լ անելորդ իրեր չունեցանք մեր տուններուն մէջ, որովհետեւ ա՛լ տունը մերը չէ, քաղաքը մերը չէ, երկիրը մերը չէ:

Բայց կան ուրիշներ, որոնք համար ի սկզբանէ իրերը իմաստ չունին, անոնք չեն կապուիր իրերու, այլ կեանքը կ'ապրին կարելիին չափ թէթեւ, պարպած իրենց նիւթեղէն ճամպրուկները, թերեւս նաեւ անոր համար, որ հոգիի ճամպրուկները ծանրացեր էին, շահ տան ծանրացեր էին:



«Թէթեւ» ապրող մըն է նաեւ այսօր արդէն աշխարհահռչակ դարձած Ֆրանսահայ Ֆրանսիս Զիւրքճեան, բոյրերու վարպետն ու Զրիստիան Տիոր տան բոյրերու բաժնի նորանշանակ տնօրէնը (2022-ին նշանակուած): Զիւրքճեանի ծնողները արեւմտահայաստանէն գաղթած են նախ Զալէայ, ապա Փարիզ հաստատուած, ուր ծներ է Զրիստիան, 1969 թուականին: Իր մեծ հօրեղբայրը երաժիշտ Արա Պարթեւեանն է, մօրե-

նական մեծ հայրը եղած է տղամարդոց դերձակ, իսկ հօրենական մեծ հայրը՝ մուշտակի վաճառական, ուրկէ եկած է իրենց Զիւրքճեան մականունը:

Չկայ նորածնութեան աշխարհահռչակ տուն մը, որուն համար Զիւրքճեան բոյր մը կամ բոյրեր ստեղծած չըլլայ. իր առաջին աշխատանքը եղած է Jean-Paul Gaultier-ի համար Le M21e բոյրը, 1995-ին. ստեղծած է Elizabeth Arden-ի համար Green Tea բոյրը, 1999-ին. բազմաթիւ բոյրեր ստեղծած է Kenzo-ի, Lancaster-ի Lanctme-ի, Lanvin-ի, Nina Ricci-ի եւ նորածնութեան բազմաթիւ այլ տուններու համար:

Իր հետ հարցազրոյցի մը ընթացքին, երբ հարց կը տրուի՝ «Եթէ արտօնուէր քեզի միայն 12 քիլօ ապրանք առնել հետոյ ճամբորդութեան ընթացքին, ի՞նչ պիտի ուզէիր առնել», Զիւրքճեան կը պատասխանէ.

«Գաղթականներու ընտանիքէ մը կը սերիմ երկու ծնողներուս ալ կողմէ: Մեծ հայրերս պարտադրուէր էին ամէն բան ձգել իրենց տոնին մէջ օրէն միւսը: Ասիկա է իմ ժառանգութիւնս: Ես իրերու չեմ կապուիր, ատիկա սակայն չ'արգիլէր սերս գեղեցիկ իրերու հանդէպ, բայց ոչ այնքան բումն կերպով, որ ուզեմ գանոնք հետս ունենալ ամայի կղզիի մը վրայ: Ասիկա ինձի ազատութիւնն էր պարզապէս: Ես տեսնուեցաւ իրերով կը կաշկանդուին: Ես կատարելապէս հանգիստ եմ այն գաղափարով, որ պէտք է նուազումի վարժուիմք այս օրերուն: Երբ փոքր էի, մեր հագուստները մենք կը նորոգէինք, ջուրը չէինք վատնել, լոյսերը անպայման պէտք էր մարէինք սենեակէն ելլելէ ետք. մայրս սովորութիւն ունէր ըսելու՝ «Ասիկա Վերսայի պալատը չէ»: Սակայն երբեք զրկուած չենք զգացած մենք մեզ»:

«Նոր պաշտօնս Տիորէն ներս կը պարտադրէ, որ հանդիպիմ բոյրի համար ծաղիկներ աճեցնող պարտիզ պաններու հետ. իրենց միջոցով ես անմիջական կապի մէջ եմ կլիմայական փոփոխութիւններու արդիւնքներուն հետ: Ինքզինքիս հարց կու տամ՝ «որպէս բոյրեր ստեղծող վարպետ, ի՞նչ կրնամ ընել, ինչպէ՞ս կրնամ նուազումի երթալ համակարգի մը մէջ, որ անընդհատ աճելու կը ձգտի»: Այստեղ է ահա որ ամէն բան կը սկսի բարդանալ»:

Հայրը՝ Պետրոս Զիւրքճեան, իսկ մայրը Ֆրանսուիկ Sylvia Florette ... իրապէս տպաւորիչ է կարողալ կիսով հայ Զիւրքճեանի հայու իր ժառանգու-

թիւնը ստանձնելու կեցուածքը. եւ ոչ միայն, նաեւ յանձնառութիւնը բնութեան հանդէպ. մանաւանդ գիտակցութիւնը՝ թէ իրերու կապուիլը առաջին հերթին կը կաշկանդէ մարդ արարածը:

Միւս կողմէ, սակայն, մարդկային շատ բնական հակում է ինքզինք գեղեցկութեամբ շրջապատելը. պարզ գիւղացիներն անգամ իրենք գիրենք կը շրջապատեն բնութեան գեղեցկութիւններով՝ պարտէզներով, այգիներով, պտղատու ծառերով, որոնք աշխարհի ամենէն բնական եւ ամենէն գեղեցիկ գեղօրները կրնան համարուիլ:

Եթէ ուշադրութիւն դարձնենք, պիտի տեսնենք թէ բոլոր անոնք, որոնք հաստատ տուն-տեղ չունին, բնութեան նուազագոյն գեղեցկութիւնը տեսնելու եւ վայելելու աչք չունին, կռուազան, վայրենի խառնուածքով, ընդհանրապէս վարձկան գիւնուորներ կ'ըլլան, որոնք մէջ վայրագութիւնը դարձած է բնական եւ սպանելը՝ հաճոյք:

Հետեւաբար ի՞նչ ընել. գրկուի՞լ գեղեցիկ իրերու վայելքէն, թե՞ կամչիլ անոնք:

Երբ գաւակներս գացին իրենց կեանքը ապրելու Հալէպ-Սուրիայէն դուրս, եւ երբ գրադարանիս գիրքերը անելի եւ անելի կը շատնային ամէն օր, ինձի համար իրապէ՛ս տագնապալի դարձաւ այդ գիրքերուն ապագայ ճակատագիրը, թեւ տակաւին Հալէպը իր խաղաղ եւ գեղեցիկ օրերուն մէջ էր: Գիշերները քունս կը կորսնցնէի մտածելով՝ ի՞նչ պիտի ըլլայ այսքան գիրքը: Յետոյ այլ մտածում մը եկաւ խաղաղեցնել հոգիս՝ այս գիրքերը այսօր ինձի մեծ հաճոյք կը պատճառեն. երբ ես ա՛լ չըլլամ, անոնք իրենց ծառայութիւնը լիովին կատարած պիտի ըլլան, հետեւաբար ...


Այսօր սակայն, երբ ես այլ վայրի մը մէջ կ'ապրիմ եւ գիրքերս որք ու անպաշտպան մնացեր են հոն, կրկին կ'իյնամ նոյն տագնապին մէջ. բայց ասիկա այլ թեմա է արդէն:

«Տխուրը այն է, որ երբ մէկը գայ իրերս դատաւարել ինձմէ ետք, բնաւ պիտի չհասկնայ, թէ ինչո՞ւ այդքան սիրած եմ գիրքնք, պիտի չտեսնէ այն բաժինը, որ խօսած է ինձի» կ'ըսէ ամերիկացի բանաստեղծ Ֆրանք Պիտար, որ նաեւ հաւաքող մը եղած է գիրքերու, գեղանկարներու, հին եւ նոր խտասալիկներու, կապոյտ ճառագայթներու եւ այլն:

Բայց եկէք ընդունիմք, որ այսքան տագնապներէ ետք, բոլորս ալ սկըսանք վերադասաւորել մեր առաջնահերթութիւնները ...


Կը կարծեմ, թէ գոնէ՝ ասիկա դրական բան է ի վերջոյ:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ
ՀԱՆԳՈՒՅԵԱԼ
ԷՕԺԵՆԻ ՏԻԳԱՔԵԱՆԻ
(Ծնեալ՝ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ)




Մահացած Գանատա, յուղարկաւորութիւնը պիտի կատարուի Ուրբաթ, 27 Յունուար 2023-ին, Թորոնթոյի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ:
Հանգուցեալին հոգեհանգստեան պաշտօնը Հալէպի մէջ պիտի կատարուի Ս. Բառասնից Մանկանց Մայր եկեղեցւոյ մէջ, Կիրակի, 29 Յունուար 2023-ին, յարարտ Ս. եւ Անմահ Պատարագին:
Յետ հոգեհանգստեան արարողութեան, ցաւակցութիւնները պիտի ընդունուին եկեղեցւոյ սրահը:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ
Հանգուցեալ
ԳՐԻԳՈՐ ՄԻԽՍԵԱՆԻ



Հանգուցեալի մահուան Բ. տարեկիցի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 29 Յունուար 2023-ին, յարարտ Ս. եւ Անմահ Պատարագի, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Վիլլաներ - Հալէպ:
Յետ հոգեհանգստեան արարողութեան, ցաւակցութիւնները պիտի ընդունուին հանգուցեալին քրոջը բնակարանը:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ
Հանգուցեալ
ԱՌԱՔԵԼ ԻՍՐԱՅԷԼԵԱՆԻ



Հանգուցեալի մահուան Բ. տարեկիցի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 29 Յունուար 2023-ին, յարարտ Ս. եւ Անմահ Պատարագի, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, Նոր Գիւղ-Հալէպ:

ՅԵՏ ՄԱՅՈՒ ՄՐՏԻ ՏՈՒՐԸ ԼՈՒՍԻՆ ԱՊՈՒԼԱՖԵԱՆ ԹՆԿՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Չորիկ Կանանեան

Կրթական եւ հասարակական գործիչ Լուսին Ապուլաֆեան իր մահ-կանացուն կնքեց Երեւանի մէջ 20 Դեկտեմբեր 2022-ին, խոր սուգի մատնելով իր զաւակները, հարազատները, բարեկամներն ու աշակերտները:

Ան ծնած էր Յալէպ 1941-ին եւ շրջանաւարտ եղած Ազգ. Զարէն Եփփէ ճեմարանէն 1962-ին: Եղած էր անդամ գաւազան կառույցներու եւ յատկապէս երկար տարիներու վարչական՝ Ազգ. Զարէն Եփփէ ճեմարանի Շրջանաւարտից Միութեան, ինչպէս նաեւ Զիլիսի Յայրենակցական Միութեան Տիկնանց Յանձնախումբին անդամ:



1963-1964 կրթական տարեշրջանին կը նուիրուի ուսուցչական ասպարէզին եւ եօթը տարիներ շարունակ կը դասաւանդէ Յայ Աւետարանական Բեթլէ վարժարանէն ներս, նպաստելով նոր սերունդի զարգացման ու հայկական բարքերու պահպանման: Ողջ կեանքը նուիրելով դպրոցին, 25 տարի անընդմիջաբար հայերէն կը դասաւանդէ Ազգ. Յայկազեան վարժարանի տղոց բաժինէն ներս, արժանանալով բոլորին սիրոյն, յարգանքին ու գնահատանքին:

Երբ այսօր հեռու ենք դպրոցական հեւքէն, կը մտածենք թէ ի՞նչ նուիրական աշխատանք կ'ենթադրէ 33 տարի շարունակ դասաւանդել եւ իր գործը կատարել մեծ սիրով: Համեստ ու պարզ այս անձնաւորութիւնը խօսող եւ պատմող գիրք էր: Ան ոչ միայն իր աշակերտներուն կը ծանօթացներ մեր հեղինակները, այլեւ զանոնք կը դաստիարակէր գեղագիտական ճաշակով, սորվեցնելով ճիշդ խօսիլ, ճիշդ՝ ինչել, ճիշդ գրել եւ ճիշդ արտասանել, իր գուրգուրանքին արժանի դարձնելով մեր լեզուն:

Ուսուցչութեան ճամբով մեծ աշխարհ մը բացած էր իր առջեւ: Հակառակ յառաջացած տարիքին, հաճոյքով վերստին կ'ընթերցէր ազգային եւ պատմական գիրքեր, որոնց շուրջ քննարկում կը կատարէր դիմատետրի էջով այն բարեկամներուն հետ, որոնց հետ երկար տարիներու մտերմութեան մէջ ապրած էր, բարի օրինակ հանդիսանալով իր մեղմ բնաւորութեամբ եւ անոյժ ժպիտով:

Սրտի ցաւ կը զգամ, որ կորսնցուցիք այս անձնաւորութիւնը: Ան ուսուցչութեան ճամբով մեծ աշխարհ մը բացած էր իր աշակերտներուն առջեւ, որոնք միշտ պիտի յիշեն զինք, բազմաթիւ այլ ուսուցիչներու կարգին: Այսօր մեզի համար մեծ տառապանք է տեսնել, որ յաջորդաբար մեր կեանքէն կը մեկնին հայ դպրոցին եւ հայ մշակոյթին ծառայող անձնաւորութիւններ՝ ամայացնելով հրապարակը:

Մեր հաւաքական կեանքէն ներս բարի նայուածքով եւ հեզահամբոյր այս անձնաւորութիւնը ոչ միայն եղաւ մտերիմ բարեկամ իր գործակիցներուն եւ ընկերներուն, այլեւ ամուսնանալով Ռաֆֆի Թնկրեանի հետ, ջերմ ընտանիք մը կազմեց եւ ունեցաւ երեք զաւակ՝ Թամար, Գօգօ եւ Շանթ: Անձնական վկայութեամբ, իրենց ընտանիքը դարձաւ բազմերանգ յարաբերութիւններու բոյն մը, իր մէջ ունենալով նուիրեալ հայ մօր եւ հայ կնոջ տիպարը, որ գլուխը բարձր պահելով, համեստ ծառան դարձաւ իր զաւակներուն, անոնց կրթութիւնը ղեկավարելով ամուր հիմքերու վրայ եւ զանոնք դարձնելով արժանիքներով հարուստ անհատներ մեր հաւաքական կեանքին մէջ:

Դժբախտաբար, անողոք հիւանդութեան պատճառաւ, ան օրէ օր տկարացաւ ու մահուան սեմին հասաւ շուրջ քառասուն օր առաջ: Զառասուն օրերը կարծես ակնթարթի մը պէս անցան, սիրելի՛ Լուսին, երբ մահուանդ գուժով խոր վիշտի մատնեցիր մեզ:

Մեր յիշողութեան մէջ անջնջելի պիտի մնայ վերաբերմունքդ բոլորին հետ: Այնքան հարազատ, այնքան պարզ ու քաղցր էին խօսքերդ, կը մասնակցէիր բարեսիրական ծրագիրներու գործադրութեան յատկապէս՝ հայրենակցական միութեան ճամբով:

Այսօր կը հաւատանք, որ յիշատակդ միշտ վառ պիտի մնայ մեր հոգիներուն մէջ եւ կրթական վաստակդ երախտագիտութեամբ պիտի յիշուի պաշտօնակիցներուդ եւ աշակերտներուդ կողմէ:

Զառասունքիդ առիթով սրտի համեստ այս խօսքերը թող ծաղկեփունջ մը ըլլան գերեզմանիդ թաւմ հողին նուիրուած եւ ընկերային յարաբերութիւններ ստեղծելու հոգիդ ոյժ հանդիսանայ մեր շրջապատին:

Լոյս՝ նուիրական հոգիիդ եւ յարգանք՝ յիշատակիդ:

ԱՄՓՈՓ ԽՈՍՏՈՎԱՆԱՆԸ



Խորէն Քիւյ. Պերթոլեան

Երբ սեղանն է սեղանակիցէն անելի ախորժելի
Երբ դագաղն է մահացողէն անելի յարգելի
Երբ գիրքն է հեղինակէն անելի օրինակելի
Երբ խօսքն է գործէն անելի լսելի
Երբ ենն է մենքէն անելի ցանկալի
Երբ սխալն է ճիշդէն անելի փափաքելի
Երբ մեղքն է արդարութենէն անելի սիրելի
Երբ հնձէն է ցանելէն անելի նախընտրելի
Երբ բամբասանքն է աղօթքէն անելի ուրախալի
Երբ սուտն է անփոխարինելի
Կը նայիմ ու կը նկատեմ թէ մենք եղած ենք զարմանալի:

Երբ շողոքորթը կը նկատուի երանելի
Երբ հրաշք ակնկալելն է ոմանց համար ծիծաղելի
Երբ դրամասեր ըլլալն է սուրբ գործէն անելի թելադրելի
Երբ ինչ-ինչ կուռքեր դարձած են պաշտելի
Երբ բարի յիշեցումներ եղած են անբաղձալի
Երբ արթուն խիղճին արդար պոռթկումն է զգուելի
Երբ խաբէբայութիւնն է խրատէն անելի գնահատելի
Երբ այլամերժութիւնն է ընդհանրապէս անայպանելի
Երբ կը մոռնանք Աստուածաշունչին պատգամը անժամանցելի
Երբ անառակ վարք ու բարքն է մեր առօրեայէն անբաժանելի
Կը զղջամ ու կը տեսնեմ թէ մեղքերն են զարշելի:

Երբ կեղծիքը կը սեպուի յաջողութեան բանալի
Երբ կասկածն է արգելք անյարթահարելի
Երբ նախանձին դերն է անժխտելի
Երբ մահամերձ խիղճն է ընդունելի
Երբ անյազ շահիլն է միայն հաճելի
Երբ ամօթալի արարքներն են յիշատակելի
Երբ անմարդկային պատկերներն են տօնելի
Երբ երազն ու տեսիլքը եղած են դատապարտելի
Երբ բարիին բացակայութիւնն է ողջունելի
Երբ պղծասիրութիւնն է շատերո՛ւ համար զովելի:

Ուստի, կը խոստովանիմ թէ միայն առ Աստուած դարձով վերականգնիլն է կարելի:

ՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՆԿԻՆ



ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ԳԱԻՎԱԶԱՆՍ



Սերիկ Սկրտիչեան

Բոլորիս կեանքը լեցուն է լաւ եւ վատ օրերով, գէշ եւ ուրախ տրամադրութիւններով: Երբեմն կացութիւններ փոխելու համար կ'ըսենք. «երանի կախարդական գաւազան ունենայի»:

Շատեր կ'ուզեն այդ կախարդական գաւազանով իրենց հիւանդ մայրը առողջացնել, փոքրիկներ իրենց սիրած խաղալիքը կ'ուզեն անմիջապէս ունենալ, իսկ աղքատը կ'ուզէ կախարդական գաւազանով հարստանալ:



Եթէ կախարդական գաւազան մը ունենայի, խաղաղութիւն կը բաշխէ բոլոր աշխարհին, առողջութիւն՝ հիւանդներուն եւ ազատութիւն՝ բանտարկեալներուն, կ'ուզէ յատկապէս կախարդական գաւազանով մը հայրենիք ճամբորդութիւնս իրականացնել, մայրենի հողերս վերադարձնել:

Աւելին. Արցախի այն ընտանիքները, որոնց հայրերը, եղբայրները եւ որդիները պատերազմի գացած են, իրենց տունները վերադարձնել: Բերձորի միջանցքը բաց յայտարարել վերջապէս, որ փոքրերը միանան իրենց հարազատներուն ու հանգիստ ապրին:

Մարդոց իրականացնելիք բաները կախարդական գաւազանով պիտի ցանկանք իրականացած տեսնել: Ափսո՛ս մարդկութիւն...:

Նոր հրատարակություններ

**ԼՈՅՍ ՏԵՍԱԾ Է ԼՅԳ
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ «ԴՐՈՇԱԿ»-Ի
2023-Ի ԱՌԱՋԻՆ ԹԻԷ**

Այսուհետև համացանցի վրայ ընթերցողը կրնայ գտնել «Դրոշակ»-ի 2023 թուականի առաջին թիվը: Ըլլալով օրուան հրատապ հարցերուն հետ, «Դրոշակի» ներկայ թիվի նիւթերու հիմնական նիւթը առնչուած է Հայաստանի ու Արցախի դիմագրաւած փորձութիւններուն եւ յատկապէս Արցախի շրջափակման: Համարի առաջնորդին մէջ անդրադարձ կատարուած է արտաքին ազդեցութիւններու տակ Հայաստանի իշխանութիւններուն վարած անհեռանկար ու վտանգաւոր քաղաքականութեան՝ յատկապէս իր դաշնակիցներուն նկատմամբ եւ նոյնքան վտանգաւոր սիրաբանութեան Հայաստանն ու Արցախը խեղդել փորձող թշնամիներուն հետ:

Քաղաքագետ Հրանդ Մելիք-Շահնագարեան «Ռուսիոյ տարածաշրջանային շահերը: Ինչպէ՞ս Յարաբերիլ Մոսկուայի Հետ» խորագիրին տակ քննական հայեացքով կը վերլուծէ Հայաստանի



իշխանութիւններուն որդեգրած քաղաքականութիւնը Ռուսիոյ նկատմամբ, ինչպէս եւ Ռուսիոյ տարածաշրջանային ներկայ քաղաքականութիւնը: Իրանագետներ Նարե Գեորգեան եւ Ժաննա Վարդանեան կ'անդրադառնան Հայաստանին եւ անոր շուրջ տեղի ունեցող իրադարձութիւններուն հանդէպ դրացի ու դաշնակից Իրանի վերաբերմունքին, որ իր արտացոլումը կը գըտնէ, յատկապէս փորձագիտական շրջանակներու մեկնաբանութիւններուն մէջ: Իրանագետ Լիանա Պետրոսեան իր կարգին լուսաբանած է Միացեալ թագաւորութեան հետաքրքրութիւնները տարածաշրջանային իրադարձութիւններուն նկատմամբ, որ պայմանաւորուած է, յատկապէս, տընտեսական այն գործարքներով, որոնք գոյութիւն ունին այս երկրին եւ Ատրպէյճանին միջեւ:

ՀՀ Գիտութիւններու Ազգային Ակադեմիան արեւելագիտութեան հիմնարկի միջազգային յարաբերութիւններու բաժնի վարիչ Արաքս Փաշայեան կ'անդրադառնայ հայ-հնդկական դարաւոր կապերուն եւ կ'արժեւորէ համաշխարհային քաղաքական մեծ կշիռ ունեցող բարեկամ երկրի հետ Հայաստանին արդիւնաւետ ու հեռանկարային կապերը աշխուժացնելու կարելորութիւնը: Ազգային անվտանգութեան հարցերու մասնագետ Արփի Աբրահամեան կ'անդրադառնայ Հայաստան-Եւրոմիութիւն յարաբերութիւններու գարգացման, ինչպէս եւ Եւրոմիութեան ոչ համարժէք արձագանգին Ատրպէյճանին շեշտուած հակահայ գործողութիւններուն:

2023-ի մեկնարկային թիւին մէջ «Դրոշակը» կը ներկայացնէ այլ հետաքրքրական հրատարակումներ եւ: «Դրոշակ» 2023-ի առաջին թիւը համացանցի վրայ կրնաք գտնել droshak.am հասցեով:

**ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ
2022 ՏԱՐՈՒԱՆ ԶՈՅԳ ԳԻՐՔԵՐՈՒՆ ԸՆՈՐՀԱՆԴԵՍԸ**

Հինգշաբթի, 19 Յունուար 2022-ի երեկոյեան, Հայկազեան համալսարանի հանդիսասրահին մէջ տեղի ունեցաւ Հայկազեան հայագիտական հանդէսի (ՀՀՀ) 2022 տարուան (42-րդ հատոր) գոյգ գիրքերուն (42/1 եւ 42/2) շնորհանդէսը, ներկայութեամբ Հայկազեան համալսարանի նախագահ վեր. դոկտ. Փոլ Հայտոսթեանի, Հանդէսի հնագոյն աշխատակից, Հայաստանի Հանրապետութեան գիտութիւններու ազգային ակադեմիայի արտասահմանեան անդամ պատմաբան պատուակալ դոկտ. Զաւէն Մսրըլեանի, Մխիթարեան միաբանութեան փունջ մը սաներու, հիւ-



րերու, բարեկամներու եւ Հանդէսի խմբագրակազմի անդամներուն:

Բացման խօսքին մէջ, Հանդէսի խմբագիր դոկտ. Արմէն Իւրնէշլեան հրաւիրեց ներկաները յոտնկայս լռութեամբ յարգելու յիշատակը Հանդէսի խմբագրակազմի ապա եւ խորհրդատու մարմնի անդամ հանգուցեալ Ժիրայր Դանիելեանի յիշատակը, որմէ ետք ան կ'ընթացէ 42-րդ հատորէն սկսեալ Հանդէսը լոյս պիտի տեսնէ մէկ հատոր-երկու գիրք դրութեամբ: Դոկտ. Իւրնէշլեան արձանագրեց ընթացիկ հատորով սկսող նորութիւնները՝ «ՀՀՀ-ի նոր մշակուած առաքելութիւնն ու տեսլականը», «մասնագիտական հարցազրոյց»-ի բաժինը, «ազգագրական, բանասիւսական» հում նիւթի ներկայացումը, հատորները եզրափակող «Յիշատակարան»-ը, միաժամանակ նշելով, թէ Հանդէսը «բեմ կը հանդիսանայ նաեւ երիտասարդ գիտնականներու, այն հաստատաբանութիւններու, կամ գէթ ակնկալիչքով, որ անոնք այս հանգամանակուոր հանդէսին մէջ հրատարակուելով, կը դառնան աւելի խստապահանջ, աւելի բժախնդիր եւ յօդուած առ յօդուած կը բարելաւեն իրենց աշխատանքը»:

Վաստակաշատ բանասէր դոկտ. Յակոբ Զոլաքեանի խօսքը ընթերցեց Հանդէսի խմբագիր տիկ. Սիլվա Փափագեան: Դոկտ. Զոլաքեան ՀՀՀ-ն նկատեց «Ներկայիս՝ Սփիւռքի մէջ աւանդական ուղղագրութեամբ լոյս տեսնող փաստօրէն միակը... բոլոր գրութիւնները, արեւմտահայերէն թէ արեւելահայերէն, լոյս կը տեսնեն աւանդական ուղղագրութեամբ: Մեր ուղղագրութեան բազմաձեւութիւններու բովին մէջ խմբագրութիւնը միօրինականացման յստակ մօտեցում կը ցուցաբերէ: Ասիկա յոյժ կարեւոր փաստ մըն է հայագիտութեան արեւմտահայ աւանդութիւնները պահպանելու տեսակետէն»: Ապա ան ընդգծեց, թէ «Հայագիտութեան նուաճումները պէտք է հասնին օտար ընթերցողին, ասիկա անհրաժեշտութիւն մըն է... մեր ցանկութիւնն է, որ մեր ուսումնասիրողները նախ կիրարկեն արեւմտահայերէնը եւ հունկ, հանրայնացնելու համար արժանի նիւթերը՝ շարադրեն անգլերէնով կամ այլ լեզուով մը: Հայագիտութիւնը մեր հոգեւոր եւ նիւթական մշակոյթի արժեքները արժեւորելու ու հանրայնացնելու դերը ունեցած է եւ ունի ներկայիս, - ու թելադրեց, - պէտք է կարողանալ օտար եւ օտարագիր հայագետներուն ալ ցանկալի բեմ դարձնել Հանդէսը... Կ'ակնկալուի նաեւ, որ Հանդէսը կարողանայ սերտ կապեր հաստատել ամբողջ Սփիւռքի տարածքին սփռուած հայագիտական հիմնարկներու եւ ամպիոններու հետ ու ապահովել անոնց մերձեցումն ու նոյնիսկ համատեղ ծրագրեր մշակել»: Դոկտ. Զոլաքեան անդրադար-

ծաւ նաեւ ընդգրկուած նիւթերուն խմբաւորումներուն՝ պատմա-հնագիտութիւն, գրականագիտութիւն, լեզուաբանութիւն, տնտեսագիտութիւն, արուեստ ու արհեստ, ընկերաբանութիւն, բանարուեստ եւ ազգագրութիւն, եկեղեցագիտութիւն, փիլիսոփայութիւն, հրապարակումներ եւն., մատնանշեց «մօտիկ անցեալի մեր խնդիրները լուսարծակի տակ» առնող նիւթեր, ու շեշտեց՝ «Մեզի համար յոյժ կարեւոր են արեւմտահայութեան ու մանաւանդ սփիւռքահայութեան վերաբերող ուսումնասիրութիւնները, որոնք լուսարծակի տակ կ'առնեն որոշ տեղավայրեր, դէպքեր ու դէպքեր, կամ կու տան համայնքային-յարանուանական ու գաղութային պատմութեան պատկերը», «ցանկալի» նկատեց որ «սփիւռքահայ գրականագետներ, արուեստաբաններ եւ երաժշտագետներ տեղ գրաւեն Հանդէսին մէջ»: Ան նկատեց որոշ հետաքրքրութեան մը ներկայութիւնը «Սփիւռքի մէջ հայ ժողովուրդի նիւթական մշակոյթի ցրուած արժեքները հաւաքողներուն եւ հանրայնացնող ուսումնասիրողներու նկատմամբ», կարեւորեց Հանդէսի հրատարակումներու բաժինը, Հանդէսին «իւրայատկութիւններէն» համարեց աշխատակիցներու կենսագրութեան ու «մահագրականներ» բաժինները: Հունկ, ան գնահատելով Հանդէսի լեզուագիտութեան բաժինը, «ցանկալի» գտաւ որ «Սփիւռքի համար լրջազոյն խնդիր ներկայացնող արեւմտահայերէնի ուսուցման հետ կապուած հարցերը՝ մեթոտաբանութիւն, դասագիրքեր, ուսուցիչներու որակաւորում, առկայ եւ առցանց, ամէնօրեայ եւ միօրեայ ուսուցման հարցերը... քննարկումի ենթարկուին»: Հանդէսին մէջ: Դոկտ. Զոլաքեան շնորհակալութիւն յայտնեց Հանդէսի հրատարակութեան զօրավիգ կանգնած մարմիններուն եւ խմբագրակազմին «բժախնդիր ու հետեւողական աշխատանքներուն»:

Շնորհանդէսի գեղարուեստական բաժինով, 42-րդ հատորի առաջին գիրքին մէջ լոյս տեսած հանգուցեալ Վահան Ա. քնյ. Զենտիորճեանի ինքնագիր յօդուածներէն երգեց իր թոռը՝ տիար Սեւակ Զենտիորճեան:

Անդրադառնալով դարերու ընթացքին բառերու, հասկացութիւններու եւ հաստատութիւններու հանդէպ մարդ արարածին ընկալման փոփոխութիւններուն, Հանդէսի պատասխանատու խմբագիր դոկտ. Անդրանիկ Տագսեան հաւաստեց, որ ՀՀՀ-ի «պատկան մարմինները, խմբագրակազմս ու անոր շուրջ հաւաքուածներս... կը դաւանիմք հայագիտութիւն հասկացութեան նոր սահմանումի, գայն աւելի լայն կը տեսնենք քան դասական հայագիտութիւնը... Մեր դաւանած հայագիտութեան նոր սահմանումը կը կիրարկենք... Հանդէսին մէջ... քանի որ կը հաւատանք որ այդպիսով հայագիտութիւնը կ'այժմեականանայ, ... կը թարմանայ, կ'երիտասարդանայ, այդպիսով ան առաւել օգտապաշտական, աստարողական կը դառնայ: Ասիկա գործընթաց մըն է, որուն իրազորումը հետեւողականութիւն կը հետապնդենք»: Դոկտ. Տագսեան եզրափակեց իր խօսքը, ընդգծելով, որ «ժամանակն է, որ ազգային գերագոյն ճգնաժամի այս օրերուն, մենք մեր բաժինը կատարած ըլլալու ինքնախաբերութեան քամֆըրթ գոնեքն դուրս գանք եւ արտակարգ ուսումով մը վերաիմաստաւորենք մեր ազգային հասկացութիւնները եւ վերաիմաստաւորուած կիրարկենք գանտը»:

Փակման իր խօսքին մէջ, Հայկազեան համալսարանի նախագահ վեր. Հայտոսթեան գոհունակութիւն յայտնեց Հանդէսին արձանագրած յաջողութիւններուն, անոր հետեւողական հրատարակման, մակարդակին պահպանման: Ան Հանդէսի 2022 տարուան գոյգ գիրքերու հրատարակումը նկատեց «վստահաբար գարգացման քայլ», անեցնելով որ «գոհունակութիւնս անպայ- Շար. Էջ 4 ➤

Ի՞ՆՉ Կ'ԸՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ

- 

Խոյ
Նիւթական գետնի վրայ անսպասելի ծախսեր պիտի ունենայք եւ թանկարժէք նուէր մը պիտի գնէք ձեր սիրելիին համար: Ձեր պաշտօնակիցներուն հետ բախումներ պիտի ունենայք, որոնք շուտով պիտի հարթուին:
- 

Ցուլ
Անհրաժեշտ է, որ ձեր աշխատանքային հարցերը շուտով լուծէք: Նոր գործի մը առիթը պիտի ընծայուի ձեզի, որ շատ արդիւնաւետ պիտի ըլլայ:
- 

Երկուորեակ
Ձեր աշխատանքները դասաւորուած են եւ դուք ձեր խելամտութեան եւ աշխատասիրութեան շնորհիւ պիտի գնահատուիք: Նոր բարեկամ մը պիտի աջակցի ձեզի:
- 

Խեցգետին
Չափազանց յոգնած էք ու հանգըտանալու կարիք ունիք: Հոգ պետք է տանիք ձեր առողջութեան, որպէսզի կարենաք շարունակել ձեր գործերը:
- 

Առիւծ
Մտիկ բարեկամ մը ուրախ լուր մը պիտի ստանաք: Ճամբորդութեան ծրագիր մը պիտի իրագործէք եւ գուարճանաք: Բարեյաջող շաբաթ է:
- 

Կոյս
Նոր գործի մը առաջարկը պիտի խանդավառէ ձեզ՝ բարելաւելով ձեր նիւթական վիճակը: Մեծ նուէր մըն ալ պիտի ստանաք սիրելի անձէ մը:
- 

Կշիռ
Ձեր գործերը դրականօրէն պիտի վարձատրուին: Ձեր նոր գաղափարները առաջարկեցէք ձեր շուրջիններուն եւ հաստատակամ քայլերով յառաջացէք ու պիտի յաջողիք:
- 

Կարիճ
Դուք նախաձեռնող էք ու բարի, այդ իսկ պատճառով պիտի ուրախացնէք ձեր շուրջինները: Դուք պիտի բարելաւէք ձեր վիճակը եւ օգնէք սիրելի մարդկանց:
- 

Աղեղնաւոր
Ձեր պարտքերը վճարեցէք, որպէսզի հոգեպէս հանգստանաք: Նոր որոշում մը պիտի գարմացնէ ու խանդավառէ ձեր ընկերները: Հաճելի անակընկալ մըն ալ կը սպասուի ձեզի:
- 

Այծեղջիւր
Աստիճան մը եւս պիտի բարձրանաք եւ հպարտանաք: Ձեր բոլոր խընդիրներն ալ հեշտութեամբ պիտի լուծէք եւ ձեր ընկերներուն վստահութիւնը շահիք:
- 

Ջրհոս
Նրբանկատ եղէք ձեր վարուելակերպին մէջ եւ յարգանքով վերաբերեցէք բոլորին հետ: Նոր նպատակներ պիտի հետապնդէք եւ յաջողութեան հասնիք:
- 

Ձուկ
Խնայողութեամբ ապրեցէք եւ մեծ գումարներ ծախսելէն խուսափեցէք: Մտալուտ յաջողութիւն մը պիտի արձանագրէք եւ հիացնէք ձեր շուրջիններուն:




Շաղիկ Գաբրիէլեան Սննդագէտ

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԳԻՐՈՒԹԵԱՆ ԲՈՒԺՄԱՆ ՎԻՐԱՀԱՏՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ


1.- Ստամոքսի թելի արտահատում (Sleeve Gastrectomy)
Այս պարագային ստամոքսը կը հատեն եւ ստամոքսին մօտաւորապէս 80%-ը կը հեռացնեն. մնացած մասը կը պահեն խողովակի ձեւով, որ նման կ'ըլլայ պանակի՝ չափով եւ երելոյթով:

SLEEVE GASTRECTOMY




BEFORE **AFTER**

2.- Ստամոքսի զօղում (Gastric banding)
Այս պարագային ստամոքսին սկիզբը (դուռը) կը դրուի օղակ մը: Այս օղակը կը պղտիկցնէ ստամոքսին չափը եւ այսպիսով կը նուազի ստամոքս մտած ուտելիքին քանակը:



3.- Ստամոքսի շրջանցում (Gastric bypass)
Այս պարագային ստամոքսը ամբողջապէս կը հեռացուի կամ կը պահուի իրմէ փոքր մաս մը, իսկ մարտդական համակարգը կը շեղի եւ որդրուի դեպի աղիքներ կ'ուղղուի:
3-րդ ձեւը (ստամոքսի շրջանցում) կը նուազեցնէ նաեւ սննդանիւթերու ներծծումը, միջնորդ ստամոքսէն մաս մը հատելը կը նուազեցնէ անօթութեան հորմոններու արտադրումը: Վերջինը կը կոչուի (Ghrelin Hormone), այս պատճառով կը նուազի անձի մօտ անօթութեան զգացումը:



րու ներծծումը, միջնորդ ստամոքսէն մաս մը հատելը կը նուազեցնէ անօթութեան հորմոններու արտադրումը: Վերջինը կը կոչուի (Ghrelin Hormone), այս պատճառով կը նուազի անձի մօտ անօթութեան զգացումը:

Ի՞նչ է ճարպակալման բուժման վիրահատութեան մեթոդը
Այս գործողութիւններու հիմնական նպատակը օրուան մէջ ուտելիքի քանակը նուազեցնելն է, որուն հետեւանքով կը նուազի նաեւ օրուան ընթացքին ստացուած ջերմութիւնը (calorie):

Ե՞րբ պետք է դիմել այս վիրահատութեան
Ընդհանրապէս այս տեսակի վիրահատութիւններու կը դիմեն այն ատեն, երբ անձը կը տառապի գիրութենէ եւ չի կարենար ձերբազատիլ աւելորդ կշիռէն սննդականոնի եւ մարզանքի միջոցաւ:
Բայց ամէն մարդ չի կրնար դիմել այս վիրահատութեան, որովհետեւ անկա ունի որոշ պայմաններ: Այսպէս օրինակ՝
1.- Երբ BMI-ը (Body Mass Index) ըլլայ 40-էն բարձր (օրինակ՝ 170 սմ. անձին կշիռը 115 քիլոկրամէն բարձր ըլլալու պարագային):
2.- Երբ BMI-ը ըլլայ 35-էն բարձր (օրինակ՝ 170 սմ. եւ կշիռը 100-էն վեր), բայց անձը տառապի գիրութեան հետ աղերսուած մէկ կամ մէկէ աւելի հիւանդութիւններէ, ինչպէս օրինակ՝ 2-րդ տեսակի շաքարախտ, սրտի հիւանդութիւններէ, կամ (sleep Apnea)-է այսինքն՝ քնանալու ատեն շունչի սաստիկ նեղութենէ:
3.- Կարելի է նաեւ կարգ մը վիրահատութիւններ ընել (օրինակ՝ ստամոքսի զօղումը), երբ BMI-ը բարձր ըլլայ 30-էն աւելի եւ անձը տառապի մէկէ աւելի քրոնիկ հիւանդութիւններէ, կամ առողջապահական խնդիրներէ, սակայն պայմանաւ որ վիրահատութիւնը ըլլայ մասնագետ քաւի մը բժիշկներու արտօնութեամբ:

Որո՞նք են ամենակարեւոր քայլերը, զորս պետք է առնել այս վիրահատութիւնները կատարելէ առաջ:
1.- Կատարել կենսանիւթերու եւ հանքանիւթերու ամէնօրեայ արեւան տարատեսակ քննութիւններ եւ որեւէ կենսանիւթի նուազումին պարագային բուժել գայն նախքան վիրահատութիւնը: Ամենակարեւոր նիւթերն են՝ երկաթը, զննքը, folic acid-ը եւ D կենսանիւթը:
2.- Նկատի առնել անձին ընդհանուր սնուցման կարգավիճակը: Օրինակ՝ շատակերութեան կամ Պոլիմիայի հարցերը պետք է լուծել վիրահատութենէն առաջ:
3.- Դեղերու չափաբաժիններու կարգաւորում, յատկապէս երբ անձը կը ստանայ ինսուլինի ներարկում: Շատ կարեւոր է դեղի չափաբաժինները կարգաւորել ուտելիքի քանակին համեմատ:
4.- Անձը լիովին պետք է տեղեակ ըլլայ վիրահատութեան տեսակէն եւ սննդականոնէն, որուն պետք է հետեւի վիրահատութեան յաջորդող առաջին շաբաթները:
5.- Ծանրութեան կորուստը պետք է տրամաբանական ըլլայ, ուստի պետք չէ տագնապիլ երբ ծանրութիւնը դանդաղ կը նուազի, յատկապէս այն անձերուն պարագային, որոնք չեն տառապիլ չափազանց գիրութենէ եւ BMI-ը իրենց մօտ 40-էն նուազ է:
5.- Վիրահատութենէն առաջ նախընտրելի է հետեւիլ քիչ կենսուժով սննդականոնի՝ առնուազն 2 շաբաթ: Այս մէկը պիտի օգնէ աւելի արագ բուժուելու վիրահատութենէն ետք եւ պիտի դիւրացնէ վիրահատութիւնը, որովհետեւ փոքրացած պիտի ըլլայ լեարդին չափը:



Ռաֆֆի Սիլահեան

ՏԵՂԱԿԱՆ

ԼՈՒՐԻՆՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

-Սուրիոյ ֆուտբոլի Դաշնութիւնը բանակցութիւններ կը վարէ երեք օտար մարզիչներու հետ՝ անոնցմէ մէկուն վստահելու տողոց Ա. հաւաքականի մարզիչութեան պաշտօնը: Ըստ դաշնութեան պաշտօնական կայքէջին, յառաջիկայ շաբթուան ընթացքին պիտի յայտարարուի անոր անունը:



-Սուրիոյ ֆուտբոլի փոխտնօրէն Սուրեան 9-րդ փուլի մրցումներու շրջագիծին մէջ, Լաթաքիոյ մէջ Զալէպի Իթթիհատը 2 - 0 արդիւնքով յաջողեցաւ պարտութեան մատնել հիւրընկալ Զըթիւնը, իսկ Զոմաի գոյգ խումբերուն՝ Քարամէյին եւ Ուասայէյին միջեւ կայացած հանդիպումը ավարտեցաւ 0 - 0 հաւասարութեամբ: 1 - 1 հաւասարութեամբ ավարտեցաւ Ճապլէի եւ Ճէյշի հանդիպումը, իսկ Դամասկոսի Ուահտէն 1 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց Թալիան: Վերջին տարիներու փոխտնօրէն Թըշիւնը, շարունակելով իր դրական արդիւնքները կրցաւ 2 - 0 արդիւնքով յաղթել Մաճըտին: Աւելցնենք, որ Ուասայէն, Ճէյշը եւ Իթթիհատը 16 կէտով կը գրաւեն աղիւսակին առաջին դիրքը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ԻՐԿԷՆ ԿԼՈՊ ՄԱՐԶԻՉՈՒԹԵԱՆ ԻՐ 1000-ՐԴ ՄՐՑՈՒՄԸ ԳԼԵԱՒՈՐԵՑ

Անգլիոյ փոխախոյնեան, Լիվերփուլի գերմանացի գլխավոր մարզիչ Իրկէն Կլոպ գլխավորեց մարզիչութեան ասպարեզի իր 1000-րդ հանդիպումը: Անգլիական «Փրենիէր լիկ»-ի մամլոյ ծառայութիւնը պաշտօնական կայքէջին վրայ շնորհաւորեց գերմանացի մասնագետը՝ անոր մարզելով յաջող արդիւնք Լիվըրփուլի կազմին հետ: Անգլիոյ առաջնութեան 21-րդ փուլի մրցումներու շրջագիծին մէջ Լիվերփուլ իր դաշտին վրայ 0 - 0 արդիւնքով հաւասարեցաւ լոնտոնեան Չելսիին հետ:



Յիշենք, որ Կլոպ 2001-2008-ին գլխավորած էր գերմանական «Մայնցը» (270 խաղ), 2008-2015-ին՝ Պորիսիա Տորթոնտը (319 խաղ), 2015-էն մինչեւ օրս Լիվերփուլը (411 խաղ):

ՉԻՏԱՆ ՓԱՓԱՔ ՈՒՆԻ ՄԱՐԶԷՆ ԻՐԿԷՆՔՈՒՄԸ

Ըստ ֆրանսական L'Equipe-ին, սպանական Ռեալ Մատրիտի նախկին գլխավոր մարզիչ Չենըտտին Չիտան փափաք յայտնած է մարզելու Թուրքիի Իվէնթուսը եւ մտադիր է մարզիչութեան ասպարեզ վերադառնալ միայն այդ խումբին հետ:



Ֆրանսայի հաւաքականի կազմին հետ աշխարհի եւ Եւրոպայի փոխտնօրէն Չիտան որպէս խաղացող մաս կազմած է Իվէնթուսին 1996-էն 2001: Չիտան գլխավոր մարզիչի աշխատանք ունեցած է միայն Ռեալ Մատրիտի հետ, որուն հետ նուաճած է 11 տիտղոս: Վերջերս ան մերժած է Փորթուկալի, Պրագիլի, Ամերիկայի եւ Միացեալ Էմիրութիւններու հաւաքականներու մարզիչութիւնը: Ան փափաք ունէր փոխարինելու Ֆրանսայի հաւաքականի Տիտիէ Տեշամփը, սակայն Ֆրանսայի ֆուտբոլի Դաշնութիւնը վերանորոգել է տեղ անոր հետ պայմանագրութիւնը Չիտան սկսաւ տարբեր ուղղութեամբ մտածել:

ԽԱԶԲԱՌ (ՄԽ 424)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2												
3												
4												
5												
6												
7												
8												
9												
10												
11												
12												

Չորիգոնական

- Կիլիկեան մանրանկարչութեան դպրոցի ակնառու ներկայացուցիչ:
- Յակառակ՝ առարկայ:
- Թիրախ: Զիչ:
- Յակառակ՝ երկրպագական մայրաքաղաք: Իրերայաջորդ տառեր:
- 9050: Որեւէ դէպքի կամ իրադրութեան հետ կապուած, մէկ կամ անէկ տարիներ լրանալու օրացուցային թուական կամ հանգրուան: Յակառակ՝ տարածքի միաւոր:
- Քաջ: Ցուցական դերանուն: Յակառակ՝ 5800:
- Սիամանթոյի ծննդավայրը: Մզլոտիլ: Յակառակ՝ լեզուով մը «այո»:
- Ժամանում: 4600:
- Սարսափ: Ռումբի տեսակ: Տաք երկիրներու պտուղ:
- Իրարու միացնել: Աղբիւր:
- Առարկայ: Կոմիտասի երգերէն. «..... Յարսներ»:
- Աւետիս Ահարոնեանի պատմութեան ժողովածուն. «Ազատութեան ..»:

Ուղղահայեաց

- Մելան: Թափանցիկ, դիւրաբեկ ու կարծր նիւթ:
- Իշամեղու: Երկրորդական կին:
- Անձնական դերանուն: Իրերայաջորդ տառեր:
- Լեզուով մը «այո»: Բերդ, որ հիմնած է Արգիշտի Ա-ը:
- Պարծենկոտ: 5900:
- Երգիծական խայթոց: Ձեւ:
- Յարաբերական դերանուն: Յակառակ՝ եփ:
- Կիլիկեան Յայաստանի մայրաքաղաքը: Ցուցական դերանուն: Յակառակ՝ 5200:
- Լուսինի բակ: Անսկզբնատա՞մ մտածում:
- Բայց: Իգական անուն:
- Իրանի հիւսիս-արեւմուտքը գտնուող պատմական երկրամաս եւ իր պետութիւն:
- Ատրեստանեան արձանագրութիւններուն մէջ յիշուած Վանի թագաւորութեան անուանումը:

ԽԱԶԲԱՌ (ՄԽ 423)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	կ	ա	ր	ա	ւ	ն	ա	ա	հ	դ		
2	ա	ր	ա	ա	ր	մ						
3	ր	ե	ճ	խ	ա	հ	ա	ն				
4	կ	ն	ի	ր	մ	ա	ր	մ	ա	ն	դ	
5	ն	ի		խ	յ	ա						
6	ւ	խ	ր	ա	տ	ե	ւ	կ	ա	ն		
7	ա	ա	դ	ա	ւ	ա	ր	Չ	յ	ա		
8	դ	ճ		ա		խ	ն	ն	ւ			
9	ա		յ	ր	ի							
10	ե	մ	ի	դ	ն	ւ	Չ	մ	ա	ն		
11	ր	ի	ւ	ր	ա	ա						
12	ա	ա	ր	ա	կ	ա	ն	ն	ա			

ԼՈՒՐԻՆՍ

Երևուեալութի 30/1 4° 11°	Երեքեալութի 31/1 4° 12°	Չորեքեալութի 1/2 7° 9°	Հինգեալութի 2/2 6° 7°	Որբաթ 3/2 5° 7°	Շաբաթ 4/2 3° 8°	Կիրակի 5/2 5° 11°
--	---	--	---	---	---	---

ՀԱՅ ԵՐԵՔ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏՆԵՐՈՒՆ ՆԱԽԱԳԱՆՈՒԹԵԱՐԲ ԱՊՈԹՔ՝ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ



Եկեղեցիներու միութեան աղօթքի շաբաթը աւանդաբար կը յիշատակուի Յունուար ամսուան երրորդ շաբաթը:



Նախագահութեամբ հայ երեք համայնքապետներուն, եկեղեցիներու միութեան աղօթք կատարուեցաւ Կիրակի, 22 Յունուար 2023-ին, կէսօրէ ետք ժամը 5:00-ին, Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ: Արարողակարգին հայ երեք համայնքապետներուն կողքին ներկայ գտնուեցան հոգեշնորհի հայր սուրբը, արժանապատիւ քահանայ հայրեր, պատուելիներ եւ ժողովուրդի գաւազները, որոնք դիմաւորուեցան «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» կիրակնօրեայ դպրոցի ուսուցչական կազմին եւ շրջանաւարտ աշակերտներուն կողմէ:



Օրուան բնաբանն էր՝ Եսայի մարգարտութեան հետեւեալ համարը. «Բարութիւն ընել սորվեցէ՛ք, իրաւունքը փնտռեցէ՛ք...»: (Ես 1.17)

Ողջոյնի խօսք արտասանեց Արժ. Տ. Չարեհ Զինյ. Շաբաթեան: Ան փառք եւ գոհութիւն առաքեց Երկնաւոր Յօր, հայցելով, որ իր խաղաղութիւնը մեր հոգիներուն մէջ տեղ գտնէ: Զահանայ հայրը ողջու-

նելով հայ ժողովուրդի գաւազները ի Յայաստան, Արցախ եւ Սփիւռք, փառք տուաւ Ամենակալին, որ այս տարի եւս առիթ ընծայեց հայ երեք համայնքապետներուն նախագահութեամբ եկեղեցիներու միութեան աղօթք կատարելու եւ «Ռատիօ Երագ»-ի առցանց սփռումին ճամ-



բով ամբողջ աշխարհը մեզի հետ աղօթակից դարձնելու:

Արարողակարգին սկիզբը տեղի ունեցաւ Երեկոյեան ժամերգութիւն: Երկրորդ մասով, հոգեպարար արարողութեամբ իւրաքանչիւր համայնքի ներկայացուցիչ աղերսանք բարձրացուց առ Աստուած, հետեւեալ խորագրերով.

1- Գոհութիւն յայտնեք Աստուծոյ, որ աղօթքի ճամբով հաւատացեալները իրար միացնողն է:

2- Թողութիւն հայցենք Յօր Աստուծմէ, քրիստոնէական միաբանութեան դէմ մեր գործած յանցանքներուն համար:

3- Խնդրենք, որ Տէր Աստուած միաբան հաւատքի մէջ հաստատուն պահէ մեզ:

Սուրբոյ Յայ Աւետարանական Համայնքի Պետ Վերապատուելի Դոկտ. Յարութիւն Սելիմեան իր պատգամը ուղղելով դիտել տուաւ,

որ Աստուծոյ մէկութեան գաղափարը ձեւակերպուած է Յայր Աստուծոյ, Որդիին եւ Ս. Հոգիին մէկ աստուածութեան կառոյցին մէջ: Հետեւաբար, ան յայտնեց, որ եկեղեցիները եւ հաւատացեալները իրաւորուած են մէկ ըլլալու եւ հոգեւոր հասունութեան ճանապարհորդութեան ընթացքին առաւել մօտենալու Աստուծոյ եւ նմանելու անոր, օրհնուելու եւ սնուելու անոր մէկ ըլլալու բնութենէն:

Օրուան բնաբանին ընդմէջէն վերապատուելին անդրադարձաւ



հայ ժողովուրդին ներկայ իրավիճակին՝ Յայաստանի, Արցախի եւ Սփիւռքի մէջ, յայտնելով, որ եկեղեցին իրաւորուած է բարութիւն ընել



սորվելու եւ սորվեցնելու, իրաւունքը փնտռելու եւ իրաւագրկուածներուն իրաւունքը պաշտպանելու:

Վերապատուելին մաղթեց, որ հայ եկեղեցին վերանորոգէ իր ուժը, վերայստակացնէ իր տեսիլքը եւ իր



ստանձնած եկեղեցական եւ ազգային առաքելութեան ջանքերը ի դերեւ չ'ելլեն:

Բերիոյ Թեմի Կաթողիկէ Յայր Առաջնորդ Արիիպատիւ Տէր Պետրոս Արք. Միրիաթեան իր պատգամին մէջ ընդգծեց քրիստոնէաներու համամիութեան ուղեգիծի երեք մակարդակ.-

- Հոգեւոր մակարդակ, երբ անազան եկեղեցիներէն եկող քրիստոնէաներ, գաւազան լեզուներով միասին կ'աղօթեն միութեան համար:

- Բարեսիրութեան, մարդասիրութեան եւ բարիք գործելու մակարդակ, որուն խօսուն օրինակն է հայ երեք համայնքապետներուն հովանաւորութեամբ գործող Յայ Ծերանցը:

- Աստուածաբանական երկխօսութեան մակարդակ, երբ եկեղեցիներ համաշխարհային մակարդակի վրայ գաւազան թեմաներով կը խորհրդակցին եւ կը խօսակցին:

Գերապայծառ անդրադառնալով հայ ժողովուրդի միասնականութեան, երեք մակարդակներուն վրայ անելցուց նաեւ նահատակութեան միութիւնը, որովհետեւ մեր ժողովուրդի նահատակները կորիզն ու խորհրդակիչն են մեր միասնականութեան:

Գերապայծառ մաղթեց, որ Ամենակալը մեր մէջ իրաւոր աղօթքի ոգին, որպէսզի բարիք ընելով, իրարու հետ գործելով եւ խորհրդակցելով վառ պահենք մեր նահատակներուն սուրբ յիշատակը:

Հուսկ, իր պատգամը փոխանցեց Բերիոյ Յայր Առաջնորդին:



Առաջնորդ Գերշ. Տէր Մակար Սրբ. Եպս. Ազգարեան: Ան դիտել տուաւ, որ երբ կ'աղօթենք եկեղեցիներու միութեան համար, օրուան բնաբանին ընդմէջէն իւրաքանչիւր պատասխանատուութեան կը կոչուինք, որպէս Քրիստոսի եկեղեցոյ մէկ անդամը:

Հետեւաբար, եկեղեցիներու միութիւնը կ'իրականանայ միայն Քրիստոսով, որ կենդանի օրինակը

եւ մեծագոյն սերը հանդիսանալով, մեր սրտերուն մէջ աստուծային սերը արծարծ կը պահէ:

Մակար սրբազան կէտք, որ հայ ժողովուրդը միութիւն հասկացութիւնը իր կեանքով վկայեց:

Սրբազան հայրը մաղթեց, որ միութիւնը ճշմարտապէս ապրինք՝ մէկ դառնալով եւ Քրիստոսի խաղաղութիւնն ու սերը ապրելով, կատարեալ խոնարհութեամբ եւ հեգութեամբ, որ պէսզի վայելենք աստուծային երանութիւնը:

Աւարտին, ներկաները միաբերան աղօթք արտասանեցին, ապա երեք համայնքապետներու օրհնութեան աղօթքէն ետք հաւատացեալները հոգեկան գոհունակութեամբ մեկնեցան եկեղեցիէն:

Մարինա Չիլաբոջեան-Պողիկեան